

Հայաստանի Հանրապետություն
«ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

N 4-12/25-22

24.11.2025թ.

Լիցենզիա ՔՊԼ-001139

Լիցենզիա ՔՊԼ-001434

Նախագծային կազմակերպություն՝ «Գլոբալ պրոեկտ»

ՍՊԸ

Տնօրեն՝ Լ.Զատիկյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ «ԲԵՐԴԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Երաշխավորվում է Տավուշի մարզի «Բերդավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Նախահաշվային արժեքը կազմում է 169840.16 հազ. ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

ՏՆՕՐԵՆ



Ա.ԾԱՏՈՒՐՅԱՆ

Փորձաքննության է ներկայացվել նախագիծ կազմված 1 ալբոմից
Գիրք 1- Նախահաշիվ

Նախահաշիվ

Նախահաշիվը կազմված է աշխատանքային նախագծի ծավալների հիման վրա և համաձայն ՀՀ կառավարության 23 հունիսի 2011 թվականի N 879-Ն որոշման :
Հաշվարկման հիմք են հանդիսանում 1984 թ. գները և նորմերը, որոնց վրա կիրառվել են հետևյալ գործակիցները`

- Հիմնական աշխատավարձ	2.47473
- Մեքենաների շահագործում	3.12879

Նյութերի գները վերցված են ՀՀ ֆինանսների նախարարության 12.2024թ. ինֆորմացիոն տեղեկագրից, նրանց վրա կիրառելով հետևյալ գործակիցները`

- Նյութերի տեղափոխման ծախսեր	1.132
- Այլ նյութեր	1,05
- Պահեստավորման ծախսեր	1,02
Միջին ամսեկան աշխատավարձի չափ է ընդունվել	267890 դրամ
Նախահաշվում հաշվարկված է նաև`	
- Վերադիր ծախսեր	13,3%
- Շահույթ	11%
- Ա.Ա.Հ	20%

Նախահաշվում հաշվարկված են նաև համապատասխան լիմիտավորված ծախսեր: Վարչապետի հանձնարարականով իրականացվող “300 դպրոց և 500 մանկապարտեզ” ծրագրի շրջանակներում պատվիրատուի առաջադրանքով տվյալ աշխատանքների համար կազմվել է միայն նախահաշիվ:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ-ն նշում է , որ`

1. Նախահաշվային գործակիցները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախահաշվային լուծումներին առնչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կամզակերպության հետ համատեղ: Մասնաորապես կիրառվել էին սխալ գործակիցներ և տվյալ ամսվան չհամապատասխանող արժեքներ, որոնք շտկվել են:

Ելնելով վերը նշվածից «Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ-ի փորձաքննությունը ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ է, Երաշխավորվում է նախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ:

Փորձագետ՝



Ա.Հարությունյան